

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դալարիկ գյուղական համայնքի ղեկավարի

(2012 թվականի 2-րդ կիսամյակ)

2012թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում Դալարիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 70 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 410 տեղեկանք, ստացել 65 պաշտոնական նամակ, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

- 2012թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սաննաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ շենքերի բակերը, սպորտ-հրապարակի տարածքը, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, համայնքի վարչական տարածքով անցնող Երևան-Գյումրի մայրուղու և երկաթգծի տարածքները:

- Նախագինակոչային տարիքի պատանիներից 29-ը ներկայացել են Արմավիրի Զինկոմ և աշնանային զինակոչը զնահատվել է բավարար:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ:

- Կարկտահարության վնասները մասամբ վերականգնելու համար համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և ժողովրդին է բաժանվել տարբեր տեսակի սերմեր՝ նոր ցանքս և սածիլավորում կատարելու համար:

- Մարզպետարանի և գյուղապետարանի համատեղ աջակցությամբ համայնքում լուծվել է խորգային հորի հարցը: Ավարտվել է խորքային հորի հորատման աշխատանքները, որի համար համայնքի բյուջեից փոխանցվել է 4000.0 հազար դրամ: Այժմ համայնքն ապահովված է մշտական ջրով:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքներ և շատ մասերում տեղադրվել է ջրաչափ սարքավորումներ խմելաջրի քլորացման հարցը լուծվում է ժամանակին:

- 2012թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

- ա) հողի հարկ - 9894.8 հազար դրամ,
- բ) գույքահարկ - 946.6 հազար դրամ,
- գ) տեղական տուրք – 353.5 հազար դրամ,
- դ) այլ եկամուտներ - 3500.0 հազար դրամ,
- ե) պաշտոնական դրամաշնորհ – 46524.2 հազար դրամ,
- զ) սուբվենցիա - 15165.2 հազար դրամ,
- է) հողի օտարումից եկամուտ – 1247.4 հազար դրամ

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր՝

- ա) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեց կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն 3100.0 հազար դրամ,
- բ) հանրապետության տոնի առթիվ համայնքում կազմակերպվել է միջոցառում, որի համար ծախսվել է 243.0 հազար դրամ,
- գ) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 344.2 հազար դրամ,
- դ) ամանորյա միջոցառումների կազմակերպման համար ծախսվել է 207.0 հազար դրամ,
- ե) Ղալարիկ համայնքի 3-րդ կարգի ոռոգման ջրանցքի վերանորոգման համար հատկացվել է համաֆինանսավորման գումար 2236.6 հազար դրամ,
- զ) «Հազարամյակի մարտահրավերներ – Հայաստան» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համայնքի 3-րդ կարգի ոռոգման ջրագծի կառուցման համար հատկացվել է 18400.0 հազար դրամ համաֆինանսավորման գումար:
- է) 5232.4 հազար դրամ ծախսվել է համայնքում նախադպրոցական կրթության հաստատությունում աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

ը) 2673.1 հազար դրամ ծախսվել է համայնքում արտադարոցական դաստիարակության հաստատությունում (երաժշտական դպրոց) աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

- Մշակույթի տունը գործում է սակայն շենքը վերանորոգման խիստ կարիք ունի:
- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման:
- Համայնքի 19 բազմաբնակարանային շենքերի կտուրները ունեն կապիտալ վերանորոգման խիստ կարիք:

Դավարիկ համայնքի ղեկավար



Պ. Սաղաթեյան